ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/117

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 117

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Ստեփանավանի Ա. Քալանթարյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Երիտասարդական 47

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով, 17 մայիսի 2021 թ. N 46

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ստեփանավանի Ա.Քալանթարի անվան գյուղատնտեսական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024 թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 02 մայիսի 2024թ

փորձագիտական այցի իրականացում՝ 18-20 հունիսի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 09 սեպտեմբերի 2024թ

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 25 սեպտեմբերի 2024թ.

Ստեփանավանի Ա.Քալանթարի անվան գյուղատնտեսական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Քրիստինե Հակոբյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Աիդա Դաբաղյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն, Կրթության որակի ապահովման պատասխանատու, կադրային հարցերով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Ալիսա Գրիգորյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արամ Հակոբյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական պետական քոլեջում առկա են բարելավման կարիք ունեցող խնդիրներ, որոնք հիմնականում կապված են ռեսուրսների բավարար ապահովման և արդյունավետ օգտագործման հետ:**

Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական պետական քոլեջը քայլեր է ձեռնարկում կրթական ծրագրերի զարգացման ուղղությամբ՝ համագործակցելով գործատուների հետ:

Դասախոսական կազմի ձևավորումն իրականացվում է մրցութային կարգով, ներգրավված են նաև գործատու դասավանդողներ:
Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի մի մասը չի համապատասխանում հաստատության առաքելությանը և մարզի աշխատաշուկայի պահանջներին: Որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացում առկա են խնդիրներ, և որոշ շրջանավարտներ լիարժեք չեն ձեռքբերում վերջնարդյունքներով սահմանված հմտությունները:
Քոլեջի նյութատեխնիկական հագեցվածությունը սահմանափակ հնարավորություններ է տալիս բոլոր վերջնարդյունքների ապահովման համար: Ուսումնական միջավայրը չի ապահովում մասնագիտական ուսուցման համար անհրաժեշտ գործնական հնարավորությունները, նախորդ հավատարմագրումից հետո ռեսուրսային բազայի թարմացումներ և վերանորոգումներ չեն իրականացվել: Շենքային պայմանները չեն ապահովում կրթական գործընթացի լիարժեք կազմակերպումը:

2. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը*

Քոլեջն ունի ձևակերպված առաքելություն, պլան-ժամանակացույց և հաշվետվողականության համակարգ: Կառավարումն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով, պլանավորումը կատարվում է ըստ կանոնակարգերի, վերհանվում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Քոլեջի առաքելության մեջ ամրագրված է գյուղատնտեսության ոլորտի միջին մասնագետների պատրաստումը, սակայն 8 կրթական ծրագրերից միայն 4-ն են վերաբերում նշված ոլորտին: Տվյալների հավաքագրման մեխանիզմներ առկա են, սակայն համակողմանի ուսումնասիրություններ չեն իրականացվում:
Որակի ապահովման համակարգի համար ստեղծվել է փաստաթղթային հենք, իրականացվել է որոշ փաստաթղթերի գնահատում և վերանայում: Իրականացվում են շահակիցների հարցումներ:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունն առայժմ չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը*

Հետազոտական բաղադրիչը ՄԿԾ-ներում լիարժեք չի ինտեգրված, դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր չկան: Չնայած որոշ ՄԿԾ-ներում առկա են հետազոտական տարրեր, հաստատությունը չունի հստակեցված հետազոտական ռազմավարություն, և հետազոտական աշխատանքների ծավալը սահմանափակ է: Դասախոսական կազմի սակավ հատվածն է զբաղվում հետազոտական գործունեությամբ, մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությամբ և նորարարությունների ներմուծմամբ:
Քոլեջում իրականացվել են որոշակի քայլեր միջազգայնացման, արտաքին կապերի և համագործակցության ուղղությամբ: Միաժամանակ, օտար լեզվի իմացության մակարդակը բավարար չէ միջազգային համագործակցության լիարժեք զարգացման համար: Քոլեջը դիտարկում է միջազգային ծրագրերի միջոցով ֆինանսական և նյութական ռեսուրսների ներգրավումը որպես զարգացման հիմնական ուղղություն, առկա է համագործակցության որոշ դրական փորձ, սակայն նոր կապերի ձևավորման և առկա կապերի ներուժի լիարժեք օգտագործման կարիք կա:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուտցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն :**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը՝ հաշվի առնելով առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

Հատուկ ուշադրություն դարձնել.

- շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավմանը՝ մասնագիտական ոլորտին համապատասխան անհրաժեշտ ռեսուրսների ապահովմամբ,
- գյուղատնտեսական ուղղվածության ընդգծմանը և այդ հարցի հիմնադրին ներկայացմանը՝ քոլեջի զարգացման ռազմավարական ուղղությունը հստակեցնելու համար,
- ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ինտեգրմանը և դասախոսական կազմի հետազոտական աշխատանքների խրախուսմանը,
- միջազգային գործընկերությունների ձևավորմանը, օտար լեզվի իմացության բարելավմանը և համագործակցության ներուժի լիարժեք օգտագործմանը:

Նշված ուղղությունների արդյունավետ կառավարումն ու բարելավման գործընթացը պահանջում են շարունակական մշտադիտարկում, գնահատման համակարգային մոտեցում և համապատասխան առանցքային ցուցանիշների սահմանում: Դրանք պետք է ներառվեն ռազմավարական կառավարման գործիքակազմում՝ հնարավորություն ընձեռելով հետևել առաջընթացին, վերլուծել արդյունքները և ձեռնարկել համապատասխան բարելավման քայլեր:

3. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:

4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մարտի 1